

ԱՊԱԳԻՆՅ

ԽՊ. ՏԱՐԻ ԹԻՒ 2414 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2414 • 11 DECEMBRE 2023 • MONDAY, 11 DECEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ԶԱՆԱՐՈՎԱ. «ԻՍՐԱՅԷԼԻՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵՆՔ՝ ԵՒՐՈՒՄԱԳՆԵՄԻ ՀԻՆ ԲԱՂԱՔԻՆ ՄԵՋ ՊՏՆՈՒՈՂ «ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶՆԵՐՈՒ» ԽՆԴԻՐԻՆ ԱՐԴԱՐ ԼՈՒԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ»



Ռուսիան չափազանց մտահոգուած է այն տեղեկութեան նկատմամբ, որ Երուսաղէմի մէջ յաճախակի դարձած են քրիստոնէայ համայնքի ներկայացուցիչներուն նկատմամբ սադրանքները: Այս մասին մամուլը ասուլիսի ընթացքին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա:

«Մասնաւորաբար ուշադրութիւն դարձուցած ենք հակամարտային կացութեան, որ ստեղծուած է Երուսաղէմի շին քաղաքին մէջ գտնուող «Հայկական պարտէզներու» («Կովետրու Պարտէզ», «Ա.») շուրջ: Անկախ դատական գործի առարկայ դարձած է Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի եւ իսրայէլեան կազմակերպութիւններէն մէկուն միջեւ:

Շար. - էջ 10

ՀՀ ԵՒ ԻՐԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌԵՏՈՒՐԻ ԿԵՂՈՆ ԲԱՆԱԼՈՒ ՄԻՏԸ

ՀՀ առեւտրական նախարարի տեղակալ Նարեկ Տրեանը Թեհրան կատարած այցի ընթացքին հանդիպած է ԻԻՀ արդիւնաբերութեան, հանքերու եւ առեւտրի նախարարի տեղակալ, ԻԻՀ առեւտրի զարգացման կազմակերպութեան տնօրէն Մեհրի Զեյնաւիի հետ: Հանդիպումին ներկայ գտնուած են Նաե ԻԻՀ-եան ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արսէն Աազեանը եւ ԻԻՀ-եան մէջ ՀՀ առեւտրական կցորդ Վարդան Կոստանեանը:



Հանդիպման ժամանակ կողմերը կարեւորած են երկկողմ առեւտրատնտեսական յարաբերութիւններու զարգացումը եւ քննարկած են այն ուղիները, որոնց շնորհիւ հնարաւոր կ'ըլլայ առեւտրաշրջանառութեան ծաւալները հասցնել մինչեւ 3 մլրդ տոլարի:

Քննարկուած թեմաներու կարգին եր Նաե Հայաստանի մէջ իրանական ապրանքներու առեւտրի կեդրոնի մը բացման վերաբերող հարցեր:

Սոյն այցի ժամանակ Նարեկ Տրեանը հանդիպած է Նաե ԻԻՀ գործակցութեան, աշխատանքի եւ ընկերային բարեկեցութեան նախարարի տնտեսական եւ ընկերային հարցերով տեղակալ Ալիռեզա Ասգարեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկած են համատեղ արտադրութիւններ հիմնելու, ինչպէս նաեւ՝ անցեալին ձեռք բերուած պայմանաւորութիւններու ընթացքին առնչուող հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ. «ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԱԶԱՏ Կ'ԱՐՁԱԿԵ 32 ՀԱՅ ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ»

Հայաստանի Հանրապետութեան վարչապետի աշխատակազմը եւ Ատրպէյճանի Հանրապետութեան նախագահի վարչակազմը համատեղ յայտարարութիւն տարածած են:

Ինչպէս «Արմէնփրէս»-ին տեղեկացուցած են ՀՀ վարչապետի աշխատակազմէն, յայտարարութեան մէջ նշուած է. «Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը համակարծիք են, որ տարածաշրջանի մէջ վաղուց սպասուած խաղաղութեան հասնելու պատմական հնարաւորութիւն կայ: Երկու պետութիւնները կը վերահաստատեն ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքներու յարգման հիման վրայ յարաբերութիւնները կարգաւորելու եւ խաղաղութեան պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրութիւնը:



Հայաստանի Հանրապետութեան վարչապետի աշխատակազմի եւ Ատրպէյճանի Հանրապետութեան նախագահի վարչակազմի միջեւ բանակցութիւններու արդիւնքով պայմանաւորութիւն ձեռք բերուած է երկու պետութիւններու միջեւ վստահութեան կառուցման ուղղութեամբ շոշափելի քայլեր ձեռնարկելու մասին:

Առաջնորդուելով մարդասիրութեան արժէքներով, եւ որպէս բարի կամքի դրսեւորում, Ատրպէյճանի Հանրապետութիւնն ազատ կ'արձակէ 32 հայ զինծառայողներու:

Հայաստանի Հանրապետութիւնն իր հերթին, առաջնորդուելով մարդասիրութեան արժէքներով, եւ որպէս բարի կամքի դրսեւորում, ազատ կ'արձակէ 2 ատրպէյճանցի զինծառայողներու:

Որպէս բարի կամքի քայլ՝ Հայաստանի Հանրապետութիւնը իր աջակցութիւնը կը յայտնէ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխութեան մասին շրջանակային համագումարի Մասնակիցներու համագումարի 29-րդ նստաշրջանը («COP29») հիւրընկալելու նպատակով Ատրպէյճանի Հանրապետութեան ներկայացուցած յայտին եւ կը հանէ իր թեկնածութիւնը: Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը յոյս կը յայտնեն, որ Արեւելեան Եւրոպայի խումբի միւս պետութիւնները նոյնպէս կ'աջակցին հիւրընկալելու նպատակով Ատրպէյճանի Հանրապետութեան ներկայացուցած յայտին: Որպէս բարի կամքի քայլ՝ Ատրպէյճանի Հանրապետութիւնը իր աջակցութիւնը կը յայտնէ Արեւելեան Եւրոպայի խումբի «COP»-ի գրասենեակին անդամակցելու համար առաջադրուած՝ Հայաստանի Հանրապետութեան թեկնածութեան:

Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը կը շարունակեն իրենց քննարկումները վստահութեան կառուցման աւելի շատ միջոցառումներու իրականացման վերաբերեալ՝ մօտ ապագային կեանքի կոչելու համար, եւ կոչ կ'ընեն միջազգային հանրութեան աջակցելու իրենց ջանքերուն, որոնք կը նպաստեն երկու պետութիւններու միջեւ փոխադարձ վստահութեան կառուցման եւ դրական ազդեցութիւն կ'ունենան Հարաւային Կովկասի ողջ տարածաշրջանի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐԲԱՆԵԱԿԸ՝ «ՀԱՅԱՍՏԱԹ-1», ԱՐՁԱԿՈՒԵՑԱՒ ՏԻԵՉԵՐԸ

Ուրբաթ՝ 1 Դեկտեմբեր 2023-ին, Երեւանի ժամանակով ժամը 22:18-ին Միացեալ Նահանգներու «Սփէյս-ԷՔՍ» ընկերութեան հրթիռով հայկական արտադրութեան «Հայասաթ-1» արբանեակը արձակուեցաւ տիեզերք:

Բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան ներկայացումով՝ «Հայասաթ-1» արբանեակը ստեղծուած է «Բազումք»-ի եւ Գիտական Նորարարութեան եւ կրթութեան կեդրոնին կողմէ:

Արբանեակը մշակած «Բազումք»-ը այս տարուան 7 Սեպտեմբերին Հայաստանի Հանրապետութեան պետական համապատասխան կառոյցին կողմէ ստացած էր տիեզերական գործունէութիւն իրականացնելու արտօնագիր:



103 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՒ ԱՅՍՕՐ

ՅԱԿՈՒՄ ԱՄԵՏԻՔԵՆ


Բնաւ աւելորդ չէ, ընդհակառակն՝ երբեմն խիստ անհրաժեշտ է մեր երթի ընթացքին ետ նայիլ եւ ներկայի ու անցեալի միջեւ զուգահեռներ դիտարկել, իրենց նմանութիւններով ու հակասութիւններով, նախկին փորձառութիւններով, ներկայ, ընթացքի մէջ գտնուող խնդիրներուն աւելի ճիշդ եւ արդիւնատու լուծումներ տալու համար:

Նախորդ շաբաթ Ամերիկայի մէջ տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի տարեկան մարաթոն-նուիրահաւաքը՝ ի խնդիր բռնագաղթի ենթարկուած արցախահայ մեր ազգակիցներու օգնութեան եւ Մայր հայրենիքի այլ կարիքներու բաւարարումին:

Ըստ Հիմնադրամի կեդրոնական գրասենեակի հաղորդագրութեան, նախնական տուեալներով այս տարի հանգանակուած գումարը կազմած է 8,4 միլիոն տոլար, որ, ինչպէս սովորաբար կը պատահի, խոստումներու հաւաքագրումէն ետք, իմ տպաւորութեամբ, թերեւ կըրնայ հասնիլ 9 միլիոնի...

Այս անգամ պիտի աշխատիմ խուսափիլ հանգանակուած գումարը զուգահեռել Հիմնադրամի 28 տարեան պատմութեան ընթացքին հաւաքուած գումարներուն հետ, որոնց մէջ առաւելագոյնը, անկասկած եւ հասկընալիօրէն, գրանցուած է 2020 թուականի 44-օրեայ պատերազմին ընթացքին եւ յետոյ՝ 170 միլիոն տոլար:

Փոխարէնը կ'ուզեմ համեմատութեան համար հիմք վերցնել 1920 թուականը՝ դժնդակ ժամանակաշրջան,



Երբ Մեծ Եղեռնէն մազապուրծ հարիւր հազարաւոր հայեր, մեծ մասամբ որբեր եւ այրիներ, Միջին եւ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ աստանդական դարձած՝ կարօտ էին հացի, պատսպարանի ու բժշկական խնամքի, վերջապէս՝ ամէն բանի, իսկ Հայկական Նորանկախ պետութեան ճակատագիրը՝ խիստ վտանգուած էր:

Այսօր, 103 տարի յետոյ, շատ քիչերը գիտեն, բացի պատմաբաններէն, որ Նոյն այդ թուականին Ամերիկայի տարածքին, ներառեալ Գանատան եւ Հարաւային Ամերիկայի մի քանի երկիրներ, աննախադէպ եւ սրտառուչ հանգանակութիւն կազմակերպուած է Ջօրավար Անդրանիկի նախագահութեամբ, Փարիզի Ազգային պատկերակութեան եւ ՀԲԸՄիութեան նախագահ Պօղոս Նուպար փաշայի յանձնարարութեամբ:

1920-ի Յունուարէն մինչեւ 1921 Օգոստոս տեղի ունեցած հանգանակութեան մասնակցած են աւելի քան 13 հազար ամերիկահայեր, որոնց մէջ նաեւ ոչ հայ նուիրատուներ: Ընդհանուր ու վերջնական հաշուեկշիռը կազմած է 523,036 տոլար, որ ըստ Google-ի հաշուարկի՝ այսօրուան սակագոյցով կը կազմէ 7,8 միլիոն տոլար: Գումար՝ որ մասամբ, կարօտեալներու օգնութեան յատկացուած մասով, կրկնապատկուած է ամերիկեան Near East Relief բարեգործական կազմակերպութեան կողմէ, շնորհիւ պետական այդ կազմակերպութեան հետ փոփոք. Ա.Տ. Յակոբեանի ունեցած բարեկամական կապերուն: Այլ խօսքով, ընդհանուր գումարը այսօրուան չափանիշով անցած է 10 միլիոն տոլարի սահմանը:

Այս կապակցութեամբ, ինչպէս կ'ըսեն՝ երջանիկ զուգահիւսութեամբ, գրադարանիս մէջ գտայ «Պատուոյ գիրք. Փրկութեան Հանգանակութեան Հայոց Ամերիկայի, 1920-1921» վերնագրով գիրքը, որ հաշուետուողականութեան իմաստով բացառիկ նմոյշ մը կը կազմէ առ այսօր, լոյս տեսած՝ Պոստոն, 1921, «Երան» տպարանէն: 249 էջ ծաւալով այդ հաշուետուութիւնը, ուր մէկ առ մէկ նշուած են իւրաքանչիւր նուիրատուի, Նոյնիսկ եթէ ընդամենը 2 կամ 5 տոլար տուած է, անունը, մականունը եւ բնիկ որտեղացի ըլլալը, ուշագրաւ բազմաթիւ փաստեր ու տուեալներ ձգած է մեզի որպէս աւանդ թէ՛ կազմակերպչական, թէ՛ տեղեկատուական իմաստով, յատկապէս ինչ կը վերաբերի կազմակերպիչ յանձնախումբերու անդամներուն, մասնակից կազմակերպութիւններուն վերաբերեալ: Հայ



Առաքելական եկեղեցին, Հայ Աւետարանական եկեղեցին, ՀԲԸՄիութիւնը, Վերակազմեալ եւ Հայ Ազգային Ռամկավար կուսակցութիւնները, արտակարգ նուիրումով, գլխաւոր պատասխանատուութիւնը ստանձնած են Փրկութեան հանգանակութիւնը գլուխ բերելու, գումարները տեղ հասցնելու եւ յանձնաձեւու գործին մէջ: Անձամբ բացառիկ աշխատանք կատարեւ է Շարժումին կեդրոնական դէմքը՝ Ազգային հերոս Ջօր. Անդրանիկը՝ այցելելով շուրջ 35 քաղաք ու հայաշատ բնակավայր, երբեմն՝ ճառախօսներու ու երգիչներու ընկերակցութեամբ, ընդհանուրի համար ծախսելով ոչ աւելի քան 5000 տոլար...

Ու քանի որ գտարին հայկական չէր կրնար համարիլ մեծածաւալ այդ նախաձեռնութիւնը, եթէ չըլլային դասալքութիւնն ու այլախոհութիւնը, փրկութեան հանգանակութիւնը ունեցած է կարեւոր բացակայութիւններ՝ Հայ կաթոլիկ եկեղեցին, ՀՅԴաշնակցութիւնը եւ ՍԴ Հնչակեան կուսակցութիւնը: Առաջինը՝ հաւանաբար չոռմի պապին համաձայնութիւնը չունենալու, երկրորդը՝ ինչպէս միշտ՝ նախաձեռնութիւնը ինք չգլխաւորելու (հաւանաբար նաեւ Ջօրավարի հետ գժտուած ըլլալու) պատճառով, իսկ երրորդը՝ հանգանակիչ Կեդրոնական Մարմինի գրասենեակի ճամբան շփոթելու պատրուակով, հակառակ Ջօրավարին տուած իր խոստումին:

Այսուամենայնիւ, մերօրեայ չափանիշներով 103 տարի առաջ նախաձեռնուած այդ հանգանակութիւնը, որուն գումարներէն 175,440 տոլարը ուղարկուեւ է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան, 109,170-ը՝ Կիլիկիոյ հայութեան, 103,600-ը՝ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան՝ կարօտեալներու ֆոնտին, 45,000-ը՝ ՀԲԸՄ-ի կարօտեալներու ֆոնտին, 21,000-ը՝ Պարսկահայոց դպրոցական պէտքերուն եւ 20,000-ը՝ Փարիզի Հայ Ազգ. Պատուիրակութեան, ուսանելի է եւ ընդօրինակելի:

Խօսքը չի վերաբերիր հանգանակուած գումարներուն եւ անոնց համեմատութեան, այլ՝ հաշուետու ըլլալու սկզբունքին, որուն յաճախ հաւատարիմ չէ եղած «Հայաստան» հիմնադրամը, որ տակաւին չէ ներկայացուցած 2020-ին հանգանակուած գումարներուն հաշուեկշիռը, նուիրատուներու մօտ, թերեւս անտեղի, կասկածներ յառաջացնելով:

Ասկէ առաջ հրապարակաւ յայտնած եմ այն կարծիքը, թէ ընդհանրապէս պէտք է փոխել «Հայաստան» հիմնադրամի ղեկավարման ձեւը եւ զայն դուրս բերել յաջորդական կառավարութիւններու տիրապետութեան տակէն եւ զայն վերածել office autonome (ինքնակառավարող) արհեստավարժ կառոյցի: Կառավարութեան դերը պէտք է սահմանափակուի ծրագիրներն ըստ իրենց առաջնահերթութեան ներկայացնելու պարտականութեամբ, առաջնորդուելով այն սկզբունքով, որ կառավարութիւնները միշտ վատ տնտեսավարողներ են:

Իսկ որպէս ընդհանուր դիտարկում այստեղ չէնք կըրնար չխոստովանիլ, որ սփիւռք ունեցող երկիրներու համեմատութեամբ, ինչպէս են լեհերը, սերպերը, իտալացիները եւ միւսները, տակաւին առանց խօսելու իրեաներու մասին, մեր հանգանակած գումարները պէտք է համարել ընդամենը խիղճի հանգստութեան համար տուրք, քան՝ հայրենիքի շէնացման կամ հզօրացման մասնակցութիւն:

Այսուհանդերձ՝ թեման կարելի չէ համարել սպառած. ողջունելի պիտի ըլլան ընթերցողներու առարկութիւններն ու տեսակէտները:

Երեւան
«Պայքար» շաբաթաթերթ

ՀՀ ԱԺ ՊԵՏԱԻՐԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԴԵՍ ԸՈՒԷԱՐԿԱԾ Է ԱՐՅԱԽԸ ԱՅԼ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՃԱՆՉԱԼԸ ԲՐԷԱԿԱՆԱՑՆՈՂ ՆԱԽԱԳԻԾԻՆ

Հայաստանի Հանրապետութեան ազգային ժողովի պետաիրական հարցերու մշտական յանձնաժողովի մեծամասնութիւնը դէմ քուէարկած է «Հայաքուէ» քաղաքացիական նախաձեռնութեան օրէնսդրական նախագիծին:

Նախագիծով կ'առաջարկուի քրեականացնել Հայաստանի Հանրապետութեան անունով Լեռնային Ղարաբաղը որբեւ այլ պետութեան կազմի մէջ ճանչնալը, ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումէն հրաժարիլը, ժխտելը:

Նախագիծին կողմ քուէարկած 26 դէմ՝ 57 պատգամաւոր:

ԱԶԱԳԵՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՍԵՏԻՍ ՂԱԳՈՒՆԵՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԲԻ ՄԱՐԿՈՍԵՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԸ Բ. ՄԱՍՈՒՐԵՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆԻ ՅՈՂՈՎԱԾՆԵՐԸ՝ ԵՌԱՅԱՏՈՐԵԱԿՈՒՄ

Թեքեան» կենտրոնում կայացաւ «Վահան Թեքեան»-ի երկերի եռահատոր ժողովածուի երկրորդ հատորի շնորհանդէպը: Գրքի հեղինակը բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Վարդուի Դաթեանն է, ում գիտական ուսումնասիրութիւնների դաշտում Վահան Թեքեանն իր ուրոյն տեղն ունի:

Հատորեակների միջոցով բանաստեղծ, արձակագիր, ուսուցիչ եւ հասարակական գործիչ Վահան Թեքեանին ընթերցողը բացայայտում է նորովի որպէս հմուտ հրապարակագիր եւ խմբագիր:

Գրքի երկու հատորներն էլ տպագրուել են «Թեքեան կենտրոն» հիմնադրամի աջակցութեամբ: Երկրորդ հատորում թեքեանասէր ընթերցողին է ներկայացւում մեծ Հայի 1911-1920 թթ. գրած եւ մամուլում տպագրած յօդուածները (առաջին հատորն ընդգրկում էր 1901-1910 թթ.): Մամուլի տարբեր էջերից հաւաքուած եւ ժամանակագրական կարգով ներկայացուած յօդուածներն առանձին հատորներով ընթերցողին են ներկայացւում առաջին անգամ: Դրանք միաժամանակ բացայայտում են հայ ժողովրդի մաքառումների ճանապարհը, լինելիութեան փնտռուածքը, ազգափրկութեան համար մղուած ոգորումները, հայ եւ համաշխարհային գրական եւ մշակութային արժէքների գնահատումը:



«Լուսաբեր», «Արեւ», «Ժամանակ», «Հայրենիք», «Շիրակ», «Բիւզանդիոն», «Ոստան», «Յուսաբեր», «Ժողովուրդի Ձայն» եւ այլ հանդէսներ ու թերթեր Կ. Պոլսի ու արտասահմանեան մամուլում սփռուած է Թեքեանի հեղինակած հրապարակագրական ահռելի ժառանգութիւնը: Մամուլում նա հանդէս էր գալիս ստորագիր, երբեմն էլ անստորագիր յօդուածներով, յօդուածներ գրելու իր եռանդով եւ արդիւնաւետ խմբագրապետութեամբ նոր եւ թարմ լիցք էր հաղորդում թերթի բովանդակութեանը՝ այն դարձնելով բազմազան: Գրքի հեղինակը նշում է՝ անստորագիր խմբագրականները, որոնք տպագրուում էին «Ժողովուրդի Ձայն ժամանակի»-ի երկրորդ էջում, ենթարկուում էին ժամանակի խիստ գրաքննութեանը, երբեմն մասամբ, երբեմն ամբողջութեամբ ջնջուում էին գրաքննիչների կողմից եւ դառնում բանավէճերի առարկայ:

Նեղիակի կարծիքով Թեքեանի հրապարակագրութիւնն ասես իր ժամանակի խնդիրների մասին ընթերցողի հետ երկխօսութիւն լինի: «Լայնախոհ Վահան Թեքեանն անելի քան անսեթեւեթ էր իր ընթերցողի հետ: Նա թերթի եւ ընթերցողի միջեւ ամրացող նիւթական եւ բարոյական յարաբերութիւնները համարում է «առեւտուր», բարոյական առեւտուր՝ ընթերցողից առած ուժը նորից ընթերցողին վերադարձնելու պատասխանատուութեամբ, ոգին, ուղղութիւնը, գաղափարը համակրութեամբ փոխանակելու «շահախնդրութեամբ»:

«Թեքեան» կենտրոնի տնօրէն Արմէն Ծուլիկեանը կարեւորեց եռահատորեակի տպագրութիւնը եւ վստահեցրեց Թեքեանի հրապարակագրութիւնը զարմանալիօրէն այժմեական է, կարծես այսօր գրուած լինի «Նէնգ դրանում է Վահան Թեքեանի եւ այլ երեւելիների մեծութիւնը»: Արմէն Ծուլիկեանը շնորհակալութիւն յայտնեց Վարդուի Դաթեանին գաղափարը կեանքի կոչելու եւ հսկայածաւալ աշխատանքի համար ու յոյս յայտնեց, որ երրորդ հատորեակին թեքեանասէր ընթերցողը երկար չի սպասի:

Գրականագետ, բանասիրական գիտութիւնների



դոկտոր, փրօֆեսոր Արծրուն Աւագեանն իր խօսքում նշեց, որ եռահատորեակը յարգանքի տուրք է մեծ գրող Թեքեանի կատարած գործին, ապրած կեանքին եւ ծաւալուն աշխատանքին, որտեղ ամփոփուած են նախորդ դարավերջից մինչեւ իր մահը հայութեան երազանքները, վերընթացներն ու վարընթացները՝ դիտուած մտածող գեղագետի, բանաստեղծի հոգով ու սրտով:

«Վահան Թեքեանը կարողացաւ ստեղծել այնպիսի գրականութիւն, որ կարծես հայելու նման մեզ պարզեց ճշմարտութիւնը: Այդպիսին են նաեւ նրա յօդուածները՝ խիստ ժամանակակից, հակիրճ, բայց լի են ասելիքով», - նշեց Արծրուն Աւագեանն ու գրքի լոյս ընծայումը մեծագոյն ձեռքբերում համարեց, ինչի շնորհիւ հեղինակի այս աշխատանքը կարելի դասել Յակոբ Օշականի, Գեղամ Սեւանի, Երուանդ Տէր-Խաչատրեանի եւ այլ գրականագետների կողքին նրանք թեքեանագիտութիւնը զարգացրել են եւ մեծ վաստակ ունեն այդ ասպարէզում:

Վարդուի Դաթեանը յիշում է՝ Վահան Թեքեանն իր մտքում դեռ մանկուց է եղել, երբ հատուացեալ տատն ընթերցում էր հարեւանի տը-



ած աղօթագիրքը, որում Թեքեանի «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութիւնն էր նաեւ: Տառը չէր ճանաչում Թեքեանին, սակայն աղօթքի պէս մրմնջում էր: Յետոյ արդէն ուսանողական տարիներին դասախօսից սիրով ընդունեց Թեքեան-Տէրեան զուգահեռներ անցկացնելու առաջարկը, սակայն դա բացայայտելու էր մեծ գրողի միայն բանաստեղծական աշխարհը:

«Այն, ինչ թաքնուած էր խորքում, յետոյ բացայայտեցի: Յանդգնութիւն է պէտք ունենալ, քանի որ որքան ուսումնասիրում ես, այնքան այն նման է ոսկու հանքի. անընդհատ բացում է, յորդահոս գետ է: Թեքեանը թոյլ տուեց ինձ մատչել իր հրապարակագրական շրայլ ժառանգութեանը, գուցէ արժանացնել: Թեքեանն ինձ համար թալիսման է, որ կարծես ինձ հետեւում է երկնքից», - նշեց գրքի հեղինակն ու վստահեցրեց Վահան Թեքեանի անձնական նկարագրի, խռովայոյզ կեանքի վրայ բացայայտում են պատմութեան ռազմագալար ժամանակները, համաշխարհային իրադարձութիւնները եւ հանրագիտարանային նիւթ են հաղորդում:

Նեղիակի կարծիքով՝ Թեքեանը երկու ավի մէջ պարփակ մեզ է ընծայում իր հրապարակագրա-

կան ժառանգութիւնը այն նոյն շրայլութեամբ, ինչ Աստուծոյ ամենաչափ նժարի կշռի առաջ էր իր ներկայութեամբ. «Նա շարունակում է մնալ հայ գրականութեան աստուածային այցելուն»:

Հայաստանի Թեքեան մշակութային միութեան նախագահ, «Թեքեան կենտրոն» հիմնադրամի խորհրդի անդամ Ռուբէն Միրզախանեանը մեծարժէք աշխատութիւնը երեւոյթ համարեց ոչ միայն



գրականագիտութեան մէջ, այլեւ ազգային կեանքում եւ յատկապէս հիմա, երբ ազգային արժէքների պահպանումը, զարգացումը ազգի ապագայի համար ունի բացառիկ նշանակութիւն: Ռուբէն Միրզախանեանը նշեց, որ յաջորդ տարի 30-րդ անգամ կանցկացուի «Վահան Թեքեան» միջազգային ամենամեայ մրցանակաբաշխութիւնը, որին այս գրքի մասնակցութիւնը կը լինի շատ տրամաբանական: Փրօֆեսոր Միրզախանեանը յատուկ գովասանքի խօսք ուղղեց Թեքեան կենտրոնի տնօրէն Արմէն Ծուլիկեանին, որի հետեւողական աշխատանքի արդիւնքում Վարդուի Դաթեանի ժողովածուի հեղինակած առաջին եւ երկրորդ հատորները լոյս աշխարհ եկան: Ռուբէն Միրզախանեանը վստահեցրեց, որ Հայաստանի Թեքեան մշակութային միութիւնը գործուն ջանքեր կ'ենդունի աշխատութիւնը ծանօթացնելու ինչպէս սփիւռքահայ շրջանակներին, այնպէս էլ հայալեզու ընթերցողներին:

Գրքի շնորհանդէսին ուսանողներն ընթերցեցին Թեքեանի հրապարակագրութեան յօդուածներից: Ներկաները բարձր գնահատեցին Վարդուի Դաթեանի գործունեութիւնը, ում մանրակրկիտ աշխատանքն իր ուրոյն եւ կարեւոր տեղն ունի թեքեանագիտութեան շրջանում:

Նեղիակը վստահ է՝ հատորեակը ճանաչման նոր դուռ կը բացի նրա հրապարակագրութեան մէջ բազմաշերտ ուսումնասիրութիւնների նիւթ կը դառնայ բանասէրների, պատմաբանների, մշակութաբանների եւ լրագրողների համար, քանի որ Վահան Թեքեանի յօդուածները տարերային ժամանակների, բախտորոշ իրադարձութիւնների, ազգային եւ համամարդկային կեանքի ու պատմութեան թանկագին վաւերագրեր են:

Հայաստանի Թեքեան մշակութային միութեան
Լրատուական կենտրոն
Քրիստինէ Մելքոնեան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ, ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԶԷ...» ՍՈՒՐԷՆ ՍԱՀԱԿԵԱՆ

«ԱՊՐԱԳԱՅ»-ի հարցերուն կը պատասխանէ «Զանգ» նախաձեռնութեան համահիմնադիր, հանրային-քաղաքական գործիչ՝ Սուրեն Սահակեան:

Հայաստանի քաղաքական կեանքը կը շարունակէ մնալ տեղքայի մէջ: Արդէն ամիսներէ ի վեր արմատական ընդդիմութիւնը քաշուած է հրապարակներէն ու քաղաքական կեանքի միակ աշխոյժ վայրը կը հանդիսանայ Ազգային ժողովի մեծ դահլիճը, ուր տեղի կ'ունենան քննարկումներ: Քննարկումներ ըսելով անշուշտ պէտք է նժարի վրայ դնել այսօրու մեր ընդհանուր իրավիճակը եւ այդ իրավիճակէն բխող ու հասունցող ազդակները:

Իշխանութիւնը, որ շատ արագ կ'ընտելանայ ստեղծուած իրավիճակներուն այսօր արդէն համոզուած է, որ եթէ արտաքին գործօններ չըլլան անկարելի է, որ մէկը, կամ ուժ մը կարողանայ երկրին մէջ իշխանափոխութիւն իրականացնել: Միւս կողմէ ալ խօսելով ընդդիմութեան մասին, ապա այդ պարագային ալ յստակ է, որ ընդդիմութիւնը ունի բաւականին անորոշ վիճակ մը ու իր կարգին կը սպասէ, որ առնուազն արտաքին ճակատի վրայ տեղի ունենայ կարեւոր փոփոխութիւններ, որոնց «դրական» ալիքը կամ մթնոլոր-



տը հասնի Հայաստան եւ ատով ալ ստեղծէ գետին նոր շարժում մը կամ շարժումներու, որոնց հիմքով ալ նոյն ընդդիմութիւնը առիթ պիտի ունենայ երթալու վճռական քայլերու:

Այս բոլորը նշելէ ետք հարկ է անշուշտ ի մտի ունենալ, որ ներքին «գաղջ» մթնոլորտին մէջ ներքին ատելութիւնը կը շարունակէ դառնալ միակ տիրական դրոյթը:

Ճգնուած կամ «զսպուած» ատելութիւնը յաճախ իր թեւերը կը տարածէ ու անոր «խայծեր»ը լսելի կը դառնան փակ սրահներու մէջ (առաւելաբար Ազգային ժողովի սրահէն ներս), որ սակայն արագօրէն «կը սառնի» ու ամէն ինչ կերթայ իր բնականոն հունով:

Ասոր զուգահեռ անշուշտ կայ, գոյութիւն ունի ներքին համատարած հարցումներու եւ վախերու մթնոլորտ մը, որուն ծայրն անշուշտ Պաքուի կողմէ մերթ ընդ մերթ հնչող հռետորաբանութիւններն են, որոնք հարցականի տակ կ'առնեն Հայաստանի անվտանգութեան մեծ պատկերը:

Ի դէպ տարբեր առիթներով եւ ակնարկելով Հայաստանի մէջ տիրող մթնոլորտին բազում գրողներ (յատկապէս սփիւռքի մէջ) բարձր աղմուկ մը ստեղծելու ճիգով խօսեցան ու անտեղի ակնարկներ ըրին այն մասին, որ այսօր մեր երկրին մէջ տիրող մթնոլորտի գլխաւոր պատասխանատուն նոյնինքն հայրենի, Հայաստանի ժողովուրդն է: Ու այդ առումով ալ լսելի դարձան տարբեր մակարդակի մեղադրանքներ, վիրաւորանքներ, պիտակաւորումներ եւ այլն ...: Ու նոյն այդ գրողները ասելի ուշ անդրադարձան, որ սխալը ոչ թէ Հայաստանի ժողովուրդն է, այլ իրենք ... պարզ անոր համար, որ չեն կարողացած ճիշդ ներկայացնել, ճիշդ հասկնալ ու ճիշդ գնահատել ստեղծուած համայնապատկերը:

Ամէն մեղք այս իշխանութիւններուն վրայ բարդելը, ոչ միայն անշնորհակալ գործ է, այլ նաեւ ասելի մեծ ճահիճներու առաջ կը դնէ մեզ ու այսօր ստեղծուած պառակտումին, ներքին անհանդուրժողութեան ու նաեւ ատելութեան «արդիւնքներ»ն է, որ կը քաղենք բոլորս: Ու այս բոլորէն վեր, ամէնակարեւոր տուեալն այն է, որ բոլոր անոնք, որ գործող իշխանութիւնները քննադատութեան թիրախ կը դարձնեն (ու թող դարձնեն այդ չէ խնդիրը), նոյնինքն իրենք իրական եւ անկեղծ լուծումներ չունին, որպէսզի հաւաքաբար կարելի ըլլայ ի վերջոյ թօթափել այս դժուարին փուլը ու քալել նոր ճանապարհով մը...:

Այս բոլորին հետ մէկտեղ օրերս Հայաստանի եւ յատկապէս Երեւանի մէջ ընթացք առած է «նոր տեսակի» ընդդիմութիւն մը, որուն երիտասարդ անդամները իրենց խմբակը մկրտած է «Զանգ» անունով ու այդ մասին ալ օրերս հեռավար կապով զրոյց մը ունեցայ նախաձեռնութեան հեղինակներէն՝ Սուրեն Սահակեանին հետ: Ստորեւ մեր զրոյցը:

Ինչպէ՞ս կը դիտարկէք Հայաստանի ներքաղաքական ընդհանուր պատկերը: Ինչ են ձեր դիտարկումները:

Ընդհանրապէս, 2021 թուականի խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներէն յետոյ Հայաստանի պաշտօնական-քաղաքական, կուսակ-

ցական կեանքը մահացած է: Քաղաքական դաշտը կը փտտի եւ զարշահոտութիւն կը տարածէ: Այդտեղ յոյս չկայ: Պէտք է այլ ճանապարհներ գտնել հանրութեան կարծիքը օրակարգային դարձնելու համար: Այդ նպատակով մենք ստեղծած ենք «Զանգ» նախաձեռնութիւնը, որ այսօր կը փորձէ քաղաքական օրակարգ ձեւաւորել եւ բարձրացուած հարցերու շուրջ համախմբել երկրի ապագայով մտահոգ մարդիկ:

Կը նշմարենք, որ արմատական ընդդիմութիւնը, որ տարբեր պահերու կարողացաւ երկրին մէջ որոշակի աշխուժութիւն ստեղծել այսօր ետ քաշուած է ու կամաց-կամաց կը դառնայ լուսանցքային: Ըստ ձեզի ինչ են իսկական պատճառները:

Ինչպէս արդէն ըսի, խնդիրն առանձին կուսակցութիւններն ու խումբերը չեն, այլ քաղաքական կեանքն ինքնին: Կուսակցութիւններու համար կեանքն ասարտած է 2021 թուականի ընտրութիւններով: Ու եթէ ժողովուրդի խանդավառ, փոփոխութիւններ ուզող ամենաաշխոյժ շերտը նոր լուծումներ չառաջարկէ, այս վիճակը շատ երկար պիտի տեւէ: Առաջարկելու պարագային հնարաւոր է վերականգնել քաղաքական կեանքը: Նոր միջավայրի մէջ նոր կուսակցութիւններ կը ծնին:

Այս «ետ քաշուել»ուն հետ կը նկատենք, որ ընդդիմութիւնը չի հրաժարի խորհրդարանական գործունեութիւնէն, ոչ ալ մտադիր է հրաժարիլ իր մանտաքներէն: Ինչո՞ւ:

Որովհետեւ այդ կենդանի մնալու ցանկութիւնն է: Մտայնութիւն կայ, թէ եթէ կայ կարեւոր ամպիոն, ուրկէ դուրս ելոյթ կ'ունենաս, ուրեմն կենդանի ես, կաս: Բայց այդ անհնար է: Ամէն նոր դրսեւորման մը հետ մենք կը տեսնենք, որ քաղաքական կեանք ըստա՞ծն ամենեւին այն չէ, ինչ մենք կ'ուզէինք տեսնել: Այն փոխելու հետ նոր քաղաքական միտք պէտք է: Դուք լսած էք որեւէ նոր միտք կուսակցութիւններէ, անոնցմէ, որոնք այսօր քաղաքական չեղած դաշտին մաս կը կազմեն: Աւելին, քաղաքական միտքը դեռ 1990-ականներու սկիզբ վերադարձած է:

Միւս կողմէ նկատելի է, որ կարգ մը փոքր խմբակներ կը փորձեն որոշակի աշխուժութիւն մը ցուցաբերել եւ անհնազանդութեան քայլերու դիմել: Այդ մէկը երկրին մէջ եղանակ փոխելու իրական ներուժը ունի՞:

Այո, հենց այդպէս ալ պիտի ըլլան փոփոխութիւնները: Ապագան կը ձեւաւորեն անոնք, որոնք ամենալաւ, համոզիչ առաջարկը կ'ընեն հանրութեան: Կը մնայ յուսալ, որ այդ առաջարկին մէջ հնարաւորինս քիչ ըլլայ ժողովրդականութիւնը, այլապէս իրական դրական փոփոխութիւններու փոխարէն կը ստանանք նոր «Նիկոլ Փաշինեան»:

Միւս կողմէ նկատելի է, որ հայրենի ժողովուրդին մօտ առկայ է մեծ անհոգութիւն եւ անյուսութիւն: Մեզի ո՞ր կը տանի այս վիճակը:

Ես չեմ կարծեր, թէ խնդիրը ժողովուրդի մէջն է: Ո՛չ: Ժողովուրդը առաջարկին կը սպասէ, որ չկայ: Երբ ըլլայ, կը տեսնէք, որ ժողովուրդը հնարաւորինս ամենալարուած, քաղաքականապէս պատրաստ վիճակի մէջ է:

Վերջին հարց. իշխանութիւնները շատ կը խօսին այն մասին, որ Ատրպայէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր մը կնքելու հեռանկարը «սարբերու ետեւը չէ»: Կայ այդպիսի բան, յոյսեր կը փայփայէք:

Ոչ, նման բան պիտի չըլլայ: Քանի դեռ Հայաստան կը գտնուի քաղաքական անկայուն վիճակի մէջ, Ատրպայէյճան ոչ մէկ հետաքրքրութիւն ունի իր ախորժակը «խաղաղութեան պայմանագիրով» զսպելու: Քանի դեռ Հայաստանի վարչապետը Նիկոլ Փաշինեանն է, որ ամէն օր պատրաստ է Հայաստանի նոր իրաւունքները զսպել, Ատրպայէյճան խաղաղութեան պայմանագիր պիտի չկնքէ:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 11 DECEMBRE 2023

L'Azerbaïdjan a-t-il ciblé les chrétiens au profit personnel de son dictateur ?

Écrit en anglais par Michael Rubin et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 30 novembre 2023

Cinq jours seulement après que Yuri Kim, secrétaire d'État adjoint par intérim, ait déclaré devant une commission sénatoriale que les États-Unis ne toléreraient aucune action militaire contre la communauté chrétienne du Haut-Karabagh, le dictateur azerbaïdjanais a ordonné à son armée d'attaquer. C'est ainsi qu'a été annihilée l'une des plus anciennes communautés chrétiennes du monde, lorsque les forces azerbaïdjanaises ont poussé à l'exil les 120 000 hommes, femmes et enfants de la région.

Certes, les dictateurs, de Pékin à Bakou, interprètent la faiblesse et la confusion du président Joe Biden comme un feu vert à l'agression. La diplomatie n'a aucune crédibilité lorsque les lignes rouges sont éphémères. Même si le Département d'État croit au pouvoir du dialogue, considérer les conflits uniquement sous l'angle d'un désaccord honnête conduit souvent à l'échec. L'idéologie compte. Il existe de nombreuses preuves que le racisme influence l'attitude du président azerbaïdjanais Ilham Aliyev à l'égard des Arméniens. Maintenant, il semble que la cupidité est également de la partie.

Le cas de Gubad Ibadoghlu, universitaire azerbaïdjanais, est édifiant. Arrêté sur ordre d'Aliyev l'été dernier, Ibadoghlu croupit en prison, privé de soins médicaux de base pour traiter son diabète et ses problèmes cardiaques. Ibadoghlu n'est pas un quelconque opposant; il s'agit plutôt d'un chercheur attentif dont les écrits expliquent pourquoi Aliyev cherche désespérément à le faire taire.

Ibadoghlu dirige le Centre de recherche économique, un groupe de réflexion qu'il a créé pour étudier la politique macroéconomique et la bonne gouvernance. Les rapports d'Ibadoghlu documentent comment Aliyev s'est emparé de terres agricoles de premier plan dans le Haut-Karabagh pour son bénéfice personnel. Alors qu'Aliyev se plaint des mines à des fins de propagande, c'est cynique. Il a forcé le Trust Halo, financé par les États-Unis, à cesser ses propres opérations de déminage et a demandé aux donateurs de faire passer tout l'argent du déminage par son intermédiaire. Il a ensuite ordonné à ses propres démineurs de nettoyer uniquement les terres que ses intérêts exploitaient, laissant les Azerbaïdjanais ordinaires sans aide.

Son objectif est le monopole. Ibadoghlu documente comment le gouvernement azerbaïdjanais n'autorise pas d'autres agriculteurs à travailler au Karabagh. Comme il le révèle : « Toutes les sociétés qui louent des terres au Karabagh appartiennent soit à la famille du président... soit à de hauts fonctionnaires ».

La propagande d'Aliyev selon laquelle il aurait libéré le Karabagh pour les Azerbaïdjanais ordinaires est tout simplement



fausse.

L'enrichissement personnel guide également le milieu de la construction. Comme l'a fait le président Recep Tayyip Erdogan en Turquie, les bénéfices d'Aliyev doublent, d'abord en injectant des milliards de dollars dans ses propres entreprises de construction, puis en obligeant ceux qui cherchent à remporter des contrats azerbaïdjanais à payer des loyers exorbitants. Aliyev et ses propagandistes ont beau répéter : « Le Karabagh est l'Azerbaïdjan » comme un mantra, mais l'Azerbaïdjan n'a jamais encore pleinement contrôlé la région. Cette réalité historique est la raison pour laquelle le dirigeant azerbaïdjanais a tant de mal à faire vivre les Azerbaïdjanais au Karabagh.

Alors que l'Azerbaïdjan et ses mandataires parrainent de somptueux voyages pour montrer la reconstruction aux Occidentaux crédules, la reconstruction que l'Azerbaïdjan montre, ce sont les contrats attribués à des entreprises turques et azerbaïdjanaises ayant des liens étroits avec les régimes au pouvoir dans les deux pays, et qui représentent la corruption alors qu'ils construisent des coquilles vides pour blanchir de l'argent.

La corruption prend de nombreuses formes. De nombreux dictateurs ne se contentent pas de 100 millions ou d'un milliard de dollars, mais en veulent davantage. Ils pourraient aborder le Haut-Karabagh en termes de souveraineté, mais le diable se cache dans les détails. Le désir de profit a influencé la décision d'entrer en guerre et de chasser de leurs terres les plus anciennes populations chrétiennes de la planète. Cela ne fait que rendre le silence de Washington encore plus honteux.

Un jour, les Arméniens reviendront et les Turcs et les Azerbaïdjanais récupéreront l'argent volé par leurs dirigeants. En attendant, la honte repose sur ceux qui facilitent de tels projets, non seulement à Ankara et Bakou mais aussi à Washington, Londres et Jérusalem.

Note : Michael Rubin contribue au blog Beltway Confidential du Washington Examiner. Il est chercheur principal à l'American Enterprise Institute. Cet article a d'abord été publié dans le Washington Examiner.

Traduction N.P.

Mirzoyan présente à Lavrov la position de l'Arménie sur la politique russe



Le ministre arménien des Affaires étrangères Ararat Mirzoyan a rencontré son homologue russe Sergueï Lavrov, à Skopje, le 30 novembre dernier.

Ararat Mirzoyan a présenté une fois de plus à la partie russe les positions de la partie arménienne concernant la politique russe et les mesures prises dans les agendas bilatéraux et régionaux.

Le « corridor de Zangezour » ne serait pas mise en œuvre

L'ambassadeur iranien en Azerbaïdjan, Seyed Abbas Mousavi, a reconnu que l'idée du « couloir de Zangezour » ne se réaliserait pas.

Seyed Abbas Mousavi a également noté qu'après les événements au Haut-Karabagh, diverses résolutions sur le règlement pacifique de la situation dans la région avaient été proposées.

L'ambassadeur iranien a déclaré que grâce à la réalisation d'initiatives économiques dans la région, il existait des conjonctures ayant un plus large consensus.



Effacer tous les signes physiques d'une présence arménienne au Karabagh

L'ambassade d'Arménie en Suisse, qui est également la mission permanente de l'Arménie auprès du bureau des Nations unies à Genève, a publié l'analyse de son rapporteur spécial sur l'état des lieux culturels et religieux importants au Haut-Karabagh.

Dans la communication adressée à l'Azerbaïdjan, le rapporteur spécial des Nations unies sur les droits culturels a exprimé son inquiétude face à la destruction et à l'appropriation de sites et d'objets arméniens d'importance historique, culturelle et religieuse, à la réinterprétation organisée de l'histoire du Haut-Karabagh pour effacer les traces de la présence d'Arméniens et de discours discriminatoires et de harcèlement à l'encontre des Arméniens dans la région, en violation des normes internationales relatives aux droits de l'homme et du droit international humanitaire.

« Je suis particulièrement préoccupé par les allégations selon lesquelles les attaques combinées contre des personnes, des monuments et des symboles, la falsification du récit historique et l'effacement des noms de lieux ainsi que les discours négatifs sur les Arméniens pourraient constituer un nettoyage culturel. »

Le rapporteur spécial de l'ONU a souligné que « la Cour internationale de Justice, le Parlement européen et le Conseil de l'Europe ont tous exprimé leurs inquiétudes face à un discours en progression en Azerbaïdjan promouvant un héritage « albanais du Caucase » pour remplacer l'héritage culturel « arménien » et à la tendance révisionniste qui nie patrimoine et présence culturels arméniens. La grande majorité des experts en art, en architecture et en archéologie de la région ont tous rejeté les affirmations révisionnistes comme étant fausses ».

Elle a souligné que « depuis le 12 décembre 2022, le corridor de Latchine reliant le Haut-Karabagh à l'Arménie est bloqué, en violation des obligations assumées par l'Azerbaïdjan dans le cadre de la déclaration de cessez-le-feu trilatéral du 9 novembre 2020 (point 6). Conséquence directe du barrage routier, 120 000 personnes auraient été isolées et privées de divers biens et services, ce qui a créé une crise humanitaire et a eu des conséquences dévastatrices sur de nombreux droits humains.

« La crise serait donc une manifestation directe de l'approche discriminatoire de l'Azerbaïdjan envers les Arméniens. Une fois la région débarrassée des Arméniens de

Suite à la page 6



Torture et traitement inhumain des détenus arméniens en Azerbaïdjan

Siranoush Sahakian, experte en droit international, a annoncé lors d'une conférence de presse que selon les données officielles, l'Azerbaïdjan détiendrait 55 prisonniers arméniens en Azerbaïdjan. Cependant, on connaît officieusement un nombre beaucoup plus important de personnes emprisonnées.

Selon elle, il est officiellement confirmé que 6 civils arméniens, 41 soldats arméniens et 8 anciennes personnalités politiques et militaires de haut rang de l'Artsakh sont actuellement en captivité en Azerbaïdjan et sont considérés comme des prisonniers politiques. En outre, il existe des données non officielles sur au moins 80 militaires et civils arméniens également détenus. Mais aucun effort n'est fait pour connaître leur sort, a déclaré Madame Sahakian.

L'experte en droit international a souligné le problème de l'impossibilité de rendre visite à ces détenus arméniens. Les autorités azerbaïdjanaises autorisent uniquement les représentants du CICR à leur rendre visite et les prisonniers n'ont pas pu rencontrer les représentants des organisations indépendantes luttant contre la torture. En règle générale, les visites du CICR sont également retardées. Dans le cas de personnalités de haut rang de l'Artsakh, cela n'a eu lieu que quelques semaines plus tard.

« Toutes les personnes renvoyées témoignent de mauvais traitements et de torture. En comparant les données, nous pensons qu'il n'existe aucun mécanisme en Azerbaïdjan qui exclut la torture. Dans les conditions de l'interdiction des visites d'experts indépendants, de tels traitements inhumains et dégradants se poursuivent », a noté Sahakian.

Elle a également noté que de nombreuses organisations associent cette question au droit international humanitaire et que le rôle principal à cet égard est attribué au CICR.

« Je considère une telle approche inacceptable. Le mandat du CICR ne cherche pas à donner une évaluation juridique des faits de torture. Le CICR ne peut même pas annoncer publiquement de tels faits », a-t-elle déclaré, ajoutant que les rapporteurs de l'ONU avaient tenté de se rendre en Azerbaïdjan, mais sans succès.



La Russie demande à protéger les droits de toutes les communautés religieuses d'Israël

La porte-parole du ministère russe des Affaires étrangères, Maria Zakharova, a indiqué que la Russie appelait les autorités israéliennes à veiller à ce que les chrétiens et toutes les autres communautés religieuses soient également protégés par la loi, y compris leurs lieux de culte et leurs biens.

Elle a souligné que le ministère russe des Affaires étrangères avait attiré l'attention sur le conflit entourant les soi-disant « jardins arméniens », connus sous le nom de « jardin des vaches » dans la vieille ville de Jérusalem, qui « a fait l'objet d'une procédure judiciaire entre le Patriarcat arménien de Jérusalem et l'une des organisations israéliennes pro-colonisation ». Sans attendre l'issue du litige, les représentants israéliens ont entamé les préparatifs pour la construction d'un hôtel sur le site litigieux, ce qui a conduit à des affrontements entre Arméniens locaux et juifs radicaux, a-t-elle expliqué.

« Nous sommes extrêmement alarmés par les informations concernant l'augmentation des actions provocatrices contre les représentants de la communauté chrétienne de Jérusalem », a souligné le diplomate.

« Nous appelons les autorités israéliennes à prendre des mesures pour garantir une solution équitable à cette question sensible dans le cadre de la loi », a souligné Zakharova. « Nous pensons que les droits de toutes les communautés religieuses du pays doivent être protégés de manière égale. Nous nous opposons à toute action illégale visant à modifier l'équilibre ethno-confessionnel historiquement établi dans la vieille ville de Jérusalem, y compris les empiètements sur les chrétiens qui y vivent depuis des siècles, leurs lieux saints et leurs biens », a conclu la porte-parole.



Effacer...

Suite de la page 5

souche, il semblerait que l'Azerbaïdjan envisage de supprimer davantage toutes les indications physiques de la présence d'Arméniens », a conclu le rapporteur spécial de l'ONU.

« Les ailes de Tatev, » meilleur trajet téléphérique au monde 2023

